ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2024 թվականի N 140-Ա

ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի N 771-Ն որոշման 3-րդ կետի պահանջներով.

որոշում եմ՝

1. Թույլատրել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի N 771-Ն որոշմամբ հատկացված միջոցների հաշվին գնման գործընթացներն իրականացնել մեկ անձից՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումներն իրականացվելու է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ հրատապ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 71-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-05-31 11:39:03 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՆ-ի կողմից

2024թ. մայիսի 31
ք. Իջևան